



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՏՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

հունիս 1884 թվ

ՆԻՍՏ Դ

8 ՅՈՒՆԻՍ 1884

հունիս 1884



Կ. ՊՕԼԵՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Կ. ՍԱՐԵԱՆ

1884

1884

# ԳԻՒԱՆՔ ԸՁԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՄԱՅՐ ԳԻՒԱՆ

Տիգրան	Էֆէնտի	Եւսուփեան	Ա. Արեւադէր
Քրիստոստուր	»	Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յովհաննէս	»	Արշակունի	Ա. Արեւադէր
Յակոբ	»	Պօշակեան	Բ. »

### Ձեռնաստութեան Դիւան

Մատթէոս Եսկ. Իզմիրեան Արեւադէր  
 Գարեգին Վրդ. Թաթարեան  
 Մարկոս Էֆէնտի Աղաբէգեանց

### Դաստիարակութեան Դիւան

Ռէթէոս Էֆ. Պերպէրեան Արեւադէր  
 Գէորգ » Ապուռլահ  
 Միքայէլ » Մամիկոնեան

### Կարուածոց Դիւան

Քրիստոս. Էֆ. Ղազարոսեան Արեւադէր  
 Յակոբ » Եէմէնիճեան  
 Պօղոս » Թորգոմեան

### Համարախորութեան Դիւան

Կարապետ Էֆ. Սըլվանեան Արեւադէր  
 Մկրտիչ » Ճանքմեան  
 Գառնիկ » Յովակիմեան

### Յարաբերութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արեւադէր  
 Ռուբէն » Պուլկուրեան  
 Վիշէն » Օրմանեան

### Իրաստութեան Դիւան

Յովհաննէս ԲՆԵ. Մկրեան  
 Յակոբ Էֆէնտի Արշակ  
 Գարրիէլ » Կորատունիկեան

### Նախաճեռնութեան Դիւան

Մինաս Էֆէնտի Ջերաղ Արեւադէր  
 Յովհաննէս » Արշակունի  
 Նշան » Պօյաճեան

### Խմբագրութեան Դիւան

Հարարձում Էֆէնտի Ալաճաճեան  
 Յակոբ » Գուրգէն  
 Մկրտիչ » Մէղպուրեան

# Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄՆՆ

## Ն Ի Ս Տ Գ.

8 ՅՈՒՆԻՍ 1884.

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ (Ա.՜-՜-՜)

ԱՏՆՆԱՊԵՏ. — Տիրբան Էփէնտի ԵՆԱՆՔԵԱՆ

### Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Ե Ս Փ Ո Ւ Ա Ն Բ

ԿԵՐԻՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԲ

ՆՆՆՆՆՆՆՆՆՆ

Ա. Վ. Իճակ

- 1 Ումէօն Եպս. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բաղրատունի Բ
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Սէթեան Բ Պ

Բ. Վ. Իճակ

- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 6 Մատթէոս Եպս. Իզմիրլեան Բ 2
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան Բ 2
- 8 Գրիգոր » Աճէմեան

Գ. Վ. Իճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան
- 10 Խորէն Քահ. Փէ՛լլի՛ւանեան
- 11 Ոսկի Քահ. Օնանեան
- 12

Դ. Վ. Իճակ

- 13 Եղիշ » Այվաղեան
- 14 Յովհաննէս Վ. Մըշարունի Բ
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան Բ 4
- 16

Ե. Վ. Իճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվաղեան
- 18 Գարեգին » Թաթարեան Բ
- 19 Սուքիաս Քահ. Ստեփանեան
- 20 Գարրիէլ » Խանճեան

- Բ Բացակայութիւն առաջին :
- 2 » երկրորդ :
- Պ » բանաւոր պատճառաւ :

ԿԵՐԱՐՆՆԵՐ

Ա. Վ. Իճակ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ԿԵՒԻԼ-ՓԱՂԱ. ԵՒ ԳՈՒՄ-ԳԱՐՈՒՐ ԴՈՒՐՈ

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ
- 22 Կարապետ Աղարժանեան Բ 4
- 23 Բարթող Գիւրքճիպաշեան Բ 2
- 24 Գէորգ Ալատուլաշեան Բ
- 25 Յ. Մէրեմ-Գուլի Բ Պ
- 26 Տիրբան Լինքեարպէյ՛նտ. Բ Պ
- 27 Աւետիս Սուրէնեան Բ Պ
- 28 Տօթ. Յ. Թրեաղեան Բ 4
- 29 » Այվաղեան Բ Պ
- 30 Գէորգ Այվաղեան Բ Պ
- 31 Յակոբ Եճմէնիճեան Բ
- 32 Յակոբ Գուրգէն Բ
- 33 Խաչիկ Կամարական Բ
- 34 Միրբան Ինճեան Բ 4
- 35 Յովակիմ Անդրեասեան Բ
- 36 Մարտիրոս Էքեղեան Բ
- 37 Մանուէլ Պէլլիեան Բ

Բ. Վ. Իճակ  
Պէլլիքալ

- 38 Բարսեղ Հայաճեան Բ 2
- 39 Յովհաննէս Քէրէստէճեան Բ
- 40 Մելքոն Պարոնիկեան Բ
- 41 Էկեմ-Գարու Բ Պ
- 42 Լեւոն Քարամաճեան Բ 2
- 43 Մարուպէ Յրէնիկեան Բ
- 44 Պողոս Էնքեղեան Բ
- 45 Յակոբ Պօշնակեան Բ

ԻՆԿԻՒՄԱՐ Ս. ԽԱԸ  
45 Սիմէօն Յէլլիկեան Բ  
46 Գարրիէլ Նորասունիկեան Բ

- 47 Գասպար Գասպարեան Բ 2
- 48

ԻՆԿԻՒՄԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

- 49 Միրբան Պահճէգախուլ. Բ 4
- 50 Պօղոս Թորգոմեան Բ 2
- 51 Տրդատ Փափաղեան Բ
- 52 Յակոբ Հաճեան Բ

Գ. Վ. Իճակ  
ԳԱՍՐԱՄ-ԲԱՂԱ

- 53 Գասպար Չերազ Բ 4
- ԲԵՐԱ
- 54 Գրիգոր Ուլիմի՛յէճեան Բ
- 55 Ղազար Հովուեան Բ
- 56 Յարութիւն Պէլլեան Բ
- 57 Նշան Պօյաճեան Բ
- 58 Վիլիս Օրմանեան Բ
- 59 Սինքերիմ Մանուկեան Բ 3
- 60 Համբարձում Մազպուլի. Բ
- 61 Մանուկ Ալանեան Բ Պ
- 62 Տիրբան Կիւմրիչեղեան Բ 4

ՄԻՋԱԳԻՂ

- 63 Տիրբան ԵՆԱՆՔԵԱՆ Բ
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ
- 65 Մկրտիչ Հանրոմեան Բ
- 66 Պօղոս Շիճմանեան Բ
- 67

ՊԵՂՈՒՄ ԵՒ ՂԱՍԽԻՊ

- 68 Միլայէլ Մամիկոնեան Բ 2
- Դ. Վ. Իճակ
- ԳՈՒՐԿՈՒՆԱՆՈՒԳ ԵՒ ԻՃԱՊԻԷ
- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ 2
- 70 Սիմօն Մազուտեան Բ 2

	Գատրգիւղ	ԳԱՆԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մոռչ
71	Գանձիկ Յովակիմեան	Կարին	121 Ստեփան ֓ափաղեան
72	Կարապետ Հազարեան	101 Սերովբէ Ազնաւորեան	Տիվրիկ
	Նարլը-Գարու	Քեթթանես	122 Նշան Գարազաչ
73	Միհրան Տէջըմէճեան	102 Աւետիա Թընկրեան	Զէյրուն Է. Մարաչ
	Եհէի-Մանալի Սամարիոյ	Աղբիւնուպօլիս	123
74		103 Յակոբ Պարոնեան	Տրապիզօն
	Թօփ-Գալու	Նիկովիղիա	124 Յարութիւն Չէրքէզեան
75		104 Կարապետ Ս.Իւթիւճեան	Պաղտատ
	Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	Ակն	125 Կարապետ Ալթեան
	Աստուածամիկ	105 Յակոբ Գօրեան	Տիգրանակերտ
76		106 Կարապետ Երէջեան	126 Միհրան Չօպանեան
	Գուրու-Չէլմէ	Արաբկիր	Վան
77	Կարապետ Սրօճեան	107 Կարապետ Խաչիկեան	127 Մարկոս Աղաբէգեանց
	Հիսար Է. Պօլաձի-Գիւղ	Բաղէշ	Աղբամար
78		108	128
	Նար-Գիւղ Է. Սրէնիա	Պրոսպ	129 Հայկ Է. Այնթապ
79		109 Քրիստոստուր Ղազարոնեան	Սէբաստիա
	Պալատ	Եղովիս	130 Մկրտիչ Յ. Մէլիբեան
80	Մկրտիչ Կիւմրէշեան	110 Կարապետ Կիւրճեան	Ռուսնուգ
81	Ռեթէոս Քաղէոսեան	Ամասիա	131
82	Ներսէս Երէջեան	111 Համբարձօւմ Ալաճաճեան	Բաբերդ
	Քարակէօմրիկ	Բալու	132
83	Յովհաննէս Թորոսեան	112 Յովհաննէս Ազնաւորեան	Զմլկաձագ
84	Կարապետ Փանոսեան	Եղեսիա	133
	Ե. Վիճակ	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
	Սամարիա	Մանճըլլա	134
85	Յակոբ Արշակ	114	Աստանա
86	Սարգիս Աղաբէգեան	Հանքն	135 Մինաս Չերազ
87	Յովհաննէս Նուրեան	115	Սղերդ
88	Ռուբէն Կիւմրէշէրտեան	Երզնկա	136 Մատթէոս Ալէքսանեան
89	Գարեգլն Պաղտատեան	116 Ռեթէոս Պէրպէրեան	Եօզատ
90	Գրիգոր Ղազարոսեան	Թերիքտաղ	137
91		117 Տիգրան Գ. Սինանեան	Մարաբիա
92		Կեսարիա	138 Գէորգ Ղարղանեան
93		Խարբերդ	Իզմիր
94		119	139
	Խազգիւղ	Պալքրեսեր	Եզիպտոս
95	Յովհաննէս Արշակունի	120 Ստեփան Գօլօշեան	140 Աբրահամ Մուրատեան
96	Ռուբէն Պալկուրեան		
97	Մարգար Գուլաբօրդէն		
98	Յակոբ Խանտանեան		
99	Նիկողոս Թիւլպէճեան		
100			

# Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Տեղեկագիրք Համարակալութեան Դիւանի Ի վերայ Աղշային Կեդր. Եւմտացոյցի .

Ընդ աստուեայ նախագահութեամբ Տէր Խորէն Արքեպիսկոպոսի Նար-Պէյ, Ա. Ատե- նապետ Տիգրան էֆէնտի Եուսուֆեան տտեանն բացաւ ժամը 7 1/2 ին, 'ի ներկայութեան 28 Երեսփոխանաց որոց թիւն 'ի վերջէ յանգեցաւ 50 ի :

## ԱՍՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1.

Վաւերացումն Ա. Բ. Ե. Գ. Յիստերու Ատենագրութեանց ,

ԱՍՏԵՆԱԿԵՏ ԷՖ. — Նախորդ շրջանի Ը. նստի տպագիր ատենագրութիւնն ժամանակին պրուեալ լինելով Երեսփոխանացդ, ներկայ շրջանի Երեք ատենագրութիւններէն առաջ նախ զայն ժողովոյդ վաւերացման կենթարկեմ :

20ՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Նախորդ շրջանէն մնացած տասնի չափ անտիպ ատենագրութիւնք կան, ուստի կ'առաջարկեմ որ անոնք ևս տպուին, և ամենքն մի անգամէն վաւերացնէ ժողովն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Պատրաստներն վաւերացնեմ այժմ, և անտիպներն ալ իրենց կարգին կը վաւերացնեմ :

Երեսփոխան Համակերպիչով Չօպանեան էֆէնտի տաւարկութեան, ըստ պնմ կը յետաձգուի նախորդ շրջանի Ը. նստի ատենագրութեան վաւերացումը :

Հետեարար Ատենապետ Էֆէնտի ժողովոյ վաւերացման կենթարկէ ներկայ շրջանի Ա. նստի ատենագրութիւնն և կը հրաւիրէ զԵրեսփոխան յայտնել իւրեանց զիտողութիւններն, եթէ ունին :

20ՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Երես 10. Այնակ Բ. — Իմ խօսքս պիտի արձանագրուի սա պէս « Ատենապետ Էֆէնտի, դուք յայտարարեցէք « Թէ օրէնքի հակառակ պիտի վարուիք, և « մենք բռէ կուտանք » և ոչ թէ՛ « եթէ լը- « ուէի պիտի դնէք խնդիրն, նախ այդ բուէին « օրինաւորութիւնն բուէարկէք » :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — (Իբր նախորդ Ատենապետ) Եթէ այդպէս խօսք մը ըսած ըլ-

լար Զօգրանեան էֆէնտի, բնական է որ ես  
ևս սպաստաբան մը տուած պիտի ըլլայի :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ.** — Ատենազրութեանց վա-  
ւերացման պահուն այդ տեսակ խնդիրներ յա-  
րուցանել ներելի է :

**ԱՏԵՆԱՊԻՐ ԷՃ.** — Ինչպէս որ Մայր-  
Դիանա խոստացած էր յառաջագոյն, ներկայ  
չըջանի բոլոր նիտերու տպեալ տաճնազրու-  
թիւններն կրցաւ հասցնել. իրաւ է թէ մի քա-  
նի տպագրական սխալներ սարգած են ասոնց  
մէջ, բայց պէտք է յայտարարեմ թէ՛ վստա-  
հութիւն ունենալով իմ ստորադասներուս վը-  
րայ, տպագրական փորձերն ես չ'եմ մէջը  
անցուցած, բայց կը յուսամ թէ ուրիշ անգամ  
չ'են պատահիր այս տեսակ ջնջին սխալներ իսկ :  
Ատենաբաններու կողմանէ ղիտողութիւն չե-  
կած, սիրտք կը համարիմ ուղղել 'ի մէջ այ-  
լոց 5րդ երես, նախագահական ճառին 16րդ  
տողին մէջ « որ բաւականէն աւելի յապաղե-  
ցաւ » ըստած է, պէտք է լինի « յաջողեցաւ » :  
Չեռագրին մէջ ճիշդ էր, բայց սխալ տարուեր  
է : Նոյնպէս Բ. Նիստ 19րդ էջին մէջ Պապօսեան  
էֆէնտիի հրատարականին առթիւ փոխանակ  
ըսելու 8 ի դէմ 14 բուէով, տարուած է 3ի դէմ  
14 որ սխալ է, ինչպէս նաև Գ. նիստ. էջ  
16 սխալակ 2րդ 12րդ տող. Ատենապետ էֆէն-  
տիի խօսքի մէջ (30րդ) ը պիտի լինի (90րդ) :

**ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՃ.** — Երես 8. Սիւնակ  
Բ. — Իմ խօսքիս մէջ « տակաւին 3 ամսոյ կը  
« կարօտի այս չըջանն աւարտելու համար »  
խօսքն պէտք է լինի՝ « տակաւին 3 ամսոյ կը  
« կարօտի իւր Սահմանադրական երկամսոյ  
չըջանն լրացնելու համար » :

Ա. նստի ատենազրութեան վրայ ուրիշ  
ղիտողութիւն ընող չլինելով, Ատենապետ է-  
ֆէնտի բուէի կը ղնէ զայն, զոր ժողովն ուր  
ՎԱԻԻԲԻ միաձայն հաւանութեամբ հանդերձ  
եղած ղիտողութեամբ ք :

Ապա Ատենապետ էֆէնտի ժողովոյ վա-  
ւերացման կ'ենթարկէ Բ. նստի ատենազրու-  
թիւնն և կը հրաւիրէ ղերեսփոխանս յայանել  
խրեանց ղիտողութիւնքն :

**ՋԵՐԱՋ Մ. ԷՃ.** — Նիստ Բ. երես 20 .  
Ա. սիւնակ 29 րդ տող, ատենազրութեան մէջ  
ըսուած էր թէ « Աղաբէզեան էֆէնտի կը վը-  
« կայէ և այլն . . . » . ես նոյն օրն ըսի թէ  
« ատենազրութիւնն կը վկայէ . . . » : Վարի  
տողին մէջ « Ապրիլ 2 » ը պէտք է լինի « Ապ-  
րիլ 1 » որ ժողովոյ զօմարման օրն էր : Նոյն  
երես 36 րդ տողին մէջ ըսուած է « թէ և Փա-  
փաղեան էֆէնտի հրատարական տուաւ » ես  
ըսած եմ « թէ եւ Փափաղեան էֆէնտի և ա-  
« պա ես հրատարական տուինք » :

**ԱՐԵՆԱՊԻՐ ԷՃ.** — Ինչպէս կը տեսնէք  
Տեարք, Երեք բարտուղարք ասա կը յուշադը-  
րեն ժողովոյս վիճարանութիւնքն, և ես յատ-  
կապէս ճօք կ'անունում : Արդ այս չորս աղբիւր-  
ներուն ևս ղիմելով, կը տեսնեմ որ Չերաղ  
էֆէնտիի խօսքերն ճիշդ տպագրեալքն նման  
արձանազրուած են, հետեւաբար իւր ցոյց տը-  
ւած կէտերն իբր սրբազրութիւն միայն կըը-  
նամ ընդունիլ և ո՛չ իբրև ուղղելի սխալ :

**ՓՈՒՍԱՅԵԱՆ Ս. ԷՃ.** — Եթէ Ատենազը-  
պիր էֆէնտին յայտարարէր մեզ թէ երես-  
փոխանաց բերնէն ելած բառերն ճիշդ ու ճիշդ  
կ'արձանագրուին, կ'ընդունի իւր ղիտողու-  
թիւնքն, բայց քանի որ մեր մէջ ստրազրու-  
թիւն չ'կայ, ըսել է թէ երեսփոխանաց խօս-  
քերն ճիշդ ու ճիշդ չ'են կարելի արձանագրել  
միշտ, հետեւաբար սրբազրութեան հարկն ե-  
րևան կուգայ և ղիտողութիւնք ներելի են :

**ԱՂԱԲԵԶԵԱՆ Մ. ԷՃ.** — Ես էլ մի քանի  
անգամ ըրած ղիտողութիւններս դարձեալ կը  
կրկնեմ, այն է թէ՛ իմ լեզուս պէտք չ'է  
փոխուի ատենազրութեան մէջ : Կը պահան-  
ջեմ որ ինչ ոճով ու բառերով որ ես կը խօ-



սիմ, նոյնութեամբ արձանագրուին անտիր . եթէ սխալ են, պատասխանատուութիւնն ինձ կը վերսրբերի :

Բ. նստի ատենագրութեան վրայ ուրիշ ղիտողութիւն ընող չլինելով, Ատենագրութեան Գ. ժողովոյ բուէին կենթարկէ զայն, որ կը ՎԱԽԵՐԷ Հանդերձ եղած ղիտողութեամբը :

Ապա Ատենագրութեան Գ. նստի ատենագրութեան վրայ :

ՓՊՓԱԶԵԱՆ Ա. ԷՅԺ. — Երես 50. Ա. սիւնակին սկիզբը, 5րդ տողէն սկսեալ պարբերութիւնն այժտք է ուղղուի սապէս « Եւ որ « պէս զի մի գուցէ այս անբաւական տեղեկա « գրին վրայ վիճարանութիւնք երկտրելով, վե « րըս փ վերայ վիրայ յաւելուք, և այս օր « ուան տրաքոյ նիստն ալ թիբրիմացութեան « արդիւնք համարելով անցնելու է. ուստի կա « ռաջարկեմ, և այն » : — Կսեւ 51 րդ եւ րեւը, Բ. սիւնակին մէջ ըստած է թէ « Դի « ւանին կողմանէ հետեւեալ բանաձեւը կա « ռաջարկուի » : Այս ծանօթութիւնն սխալ է, կը յիշէք որ այս բանաձեւն ո՛չ թէ Դիւանին, այլ իմ կողմէս ներկայացաւ, ուստի կը խնդրեմ որ ըստ այնմ ուղղուի :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅԺ. — Իրաւ է թէ 'ի սկզբան գրաւոր առաջարկութիւն մը ներխոյստոյ փափագեան էֆէնտի, սակայն Երեսփոխանք նոյն բանաձեւին վրայ զանաղոն բարեփոխութիւններ առաջարկելով, 'ի վերջոյ նոյն ինքն փափագեան էֆէնտի համաձայնեցաւ եղած բարեփոխութեանց հետեւապէս յիշեալ առաջարկըն դարբեցաւ այլ եւս այս կամ այն Երեսփոխանին առաջարկն ըլլալէ, և այն պատճառաւ Դիւանն ներկայացոյց որդեւալ բանաձեւն :

ԹՆՎՐԵԱՆ Ա. ԷՅԺ. — 52 րդ երեսին սկիզբն իմ խօսքս հարցական եղանակաւ արձանագրելու առած է, ըսած եմ « պէտք է որ ժամանակ « որոշուի, վասն զի կրնայ ըլլալ որ Մակար « Սրբազանին տեղեկագիրն յապաղի » : Երբ այս խօսքերն կըսէի, Նուրեան էֆէնտի ինձ դատնալով, խօսակցութեան ձեւով ըսաւ թէ՛ « խնդրեմ այդ տեսակ տղայական մտածում « ներ մի՛ ունենար » ըսոյց տաի անհատական ղիտողութիւն մ'էր զոր ատենագրութեան մէջ անցնելն անպատե՛հ կը նկատեմ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅԺ. — Երեսփոխան մը մի միայն իւր խօսքերն ուղղելու իրաւունք ունի և ո՛չ թէ այլոց խօսքերն, եթէ անպատե՛հ կը համարուի այսինչ կամ այն ինչ խօսքին արձանագրութիւնը և հրատարակութիւնն, աւելի աղեկ է որ Երեսփոխանք առաջուց իրենց խօսքին տե՛րն ըլլալով, վերջէն այս տեսակ ղիտողութեանց տեղի չ'տան :

Զայս առելով Ատենագրութեան Գ. նստի ատենագրութիւնն զոր փողովն կը ՎԱԽԵՐԷ եղած ղիտողութեամբ հանդերձ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅԺ. — Ես իմ մասին չնորհակալ եմ և գոհ որ Մայր-Դիւանն կը փութայնէ ներկայ չըջանի ատենագրութեանց տարագրութիւնն, բայց միանգամայն ուշադրութիւն կը հրաւիրեմ նախորդ չըջանի ատենագրութեանց վրայ օրոյց մէկ մասն ղիզուած կը մնան ց'արդ :

Յայտնի է թէ մենք իբր հրաժարեալ Դիւանն ո՛չ եւս իրաւունք ունինք անոնց տղազրութեանն հսկելու, մեր միակ օգարտքն է կարողալ, օրրագրել, ստորագրել զանոնք և տալ 'ի հրատարակութիւն : Արդ պէտք է գիտնալ թէ նախորդ չըջանէն ո՛չ թէ միայն անտալ, այլ և անպարտաւոր ատենագրութիւնք կան

տակաւին, որոց ստեղծագմանն համար կը խընդ-  
րեմք որ Մայր-Գիւսանն աշտկցի մեզ և պէտք  
եղած հրահանգն տայ աւ որ անկ է, ապա թէ  
ոչ ես կը թողում անոնց պատասխանատու-  
թիւնը :

ԱԶՎԱՅԵԱՆ Կ. ԷՖ. — Կրնայի ըմբռնել  
որ տունագրութիւն մը անտիպ մնար, վասն  
զի գրամի պակասութիւն կայ, սը մեր ամեն  
գործոց զլխաստր արգելքներէն մին է, բայց  
բնաւ չ'էի կրնար մտածել որ անցեալ շրջանի  
ատենագրութիւն մը այսքան ատենէ 'ի վեր  
խմբագրուած չ'լինի : Ուստի ես եւս այս պա-  
րագային վրայ ուշադրութիւն հրաւիրելով, կը  
զգուշացնեմ այս կարգի յարադրում մը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ամեն շրջանի ըս-  
կիւրն, նորընտիր Գիւսանն ստեղծագրութեամբ  
կը հասցնէ մի քանի նիտտութեաւ տտենագրու-  
թիւնները, բայց վերջէն կը թողու : Մաղ-  
թեմք որ մեր այժմեան Գիւսանն ևս այդ ըն-  
թացքին չ'հետեւի :

ԱՏԵՆԱՐՊԻՐ ԷՖ. — Հոգ մի ընկք, Փա-  
փագեանն էֆէնտի, փորձով պիտի տեսնէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կոպակովեմ նախորդ  
Գիւսանի անդամներն թէ պէտք եղած նախա-  
հոգ միջոցներն ձեռք պիտի առնուին՝ նախորդ  
շրջանէն մնացեալ ատենագրութեանց հետզհե-  
տէ տպագրման մասին ևս :

2.

Բացակայութիւնք

Երեսփոխաններէն՝

Տ. Կորսագևո Գ. յ.

Տիգրան

Ալիկան

Էֆէնտի

Սինանեան

անձնական տիրութեան պատճառաւ ժողովոյ  
այս աւար նիստէն իրենց բացակայութիւնն  
գրով հաղորդած լինելով Գիւսանին, Ատենա-  
պետ էֆէնտի ժողովոյ հաւանութեամբ, իբր  
օրինաւոր բացակայ արձանագրել կուտայ նոցա  
անուանքը ներկայութեան տուժարին մէջ :

Այս Ատենապետ էֆէնտի կ'ընթեռնու  
Թորգոմեան Պօղոս էֆէնտիի հետեւեալ բա-  
ցակայութեան գիրն :

Վսեմաշուք Ատենապետ

Ազգ. ժողովոյ

Տէր

Իւսկ. ձեմարան վարժարանի Հո-  
գարարութեան պաշտօնիս պատճառաւ  
ուր այս շարթուան մէջ տարեկան քըն-  
նութիւնը կը լինին իմ ներկայութիւնս  
անհրաժեշտ լինելով ցաւ ի սիրտ կը  
պարտաւորեմ այս օրուան տեղի ունե-  
նալիք Ազգ. ժողովոյ գործակցութենէ  
բացակայ մնալ :

Խնդրելով Վսեմաշուք Տէր ընդու-  
նիլ իմ անկեղծ մեծարանաց հաւաս-  
տին .

Մնամ խորին յարգանօք

Պ. Թորգոմեան

8 Յունիս 1884

Իւսկիւտար Նոր-թաղ

ՁԱՅՆԵՐ . — Օրինաւոր չէ՛ այդ պատճա-  
ռն :

ՁԵՐԱՋ Մ. ԷՖ. — Թորգոմեան էֆէնտի  
Համարակալութեան Գիւսանի կողմանէ տեղե-  
կարէր կարգուած լինելով, սարտաւոր էր ներ-  
կայ գտնուիլ այսօր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէեւ օրէնքն բաց-  
րոշ պատճառներ նշանակած է Երեսփոխանաց

բայակայալթեանն համար, սակայն բանի որ մեր գաշտօնակիցը իրը տեսուչ ձեմարանի վարժարանին հարցաբնութիւններն յառաջ կը բերեալ ժողովին վը մնայ որոշել թէ՛ որդեոր արժան է այս բացակայութիւնն օրինաւոր նըկատել կամ ոչ։

**ՃԱՆՏՄԵԱՆ Մ. ԷՅ.** — Օրինաց սոյն տըրամադրութիւնն շատ անգամ երեւոխոսանայ սուտ զրուցել տալու կը հարկադրէ, ուստի ես կարծեմ թէ՛ հարկ է նախ մեր ներքին կանոնադրի կէտերն բարեփոխել։

**ԹՆԿՐԵԱՆ Ա. ԷՅ.** — Այժմ օրէնքը զոր ծաղրենք, Ատենակետ էֆէնտի, և անյնխը մեր օրակարգին, երբ կարգը ներքին կանոնադրի սրբազրութեան զայ, յայնժամ մեզմէ իւրայանչիւրն կրնայ իւր զիտղութիւններն ընել։

Ձանազան նստարաններէ երեւոխոսանք սոյն միջադէպին փակումն պահանջելով, Ատենակետ էֆէնտի քուէի կը դնէ և ժողովն միւս ձայն հաւանութեամբ կորոշէ թէ՛ ըստ ներքին կանոնադրի, Թորգոմեան Պօղոս էֆէնտի յառաջ բերած պատճառն օրինական չ'կրնար նկատուիլ և հետեւաբար իրր պարզ բացակայ արձանագրել կուտայ նորա անունն 'ի տուժմարի ներկայութեան։

3.

Հրաժարագիր Տիգրան ԷՅ. Հիւնքեարպէյեանու եակի Բ. Ատենակայրութեկէ Ազգ. ժողովոյ։

Ատենակետ էֆէնտիի հրախրանօք Ատենադպիր էֆէնտի կ'ընվեոնու Հիւնքեարպէյեանեան էֆէնտիի հետեւել հրաժարագիրն։

Գերապատիւ Տէր,

Ընդունեցայ Ձեր Գերապատուութեան 12 ամսաթիւ նամակն։

Գիշ օրէն Պօլսէն հեռանալ ստիպուելով կը ցաւիմ որ չպիտի կրնամ ընդունիլ Մայր Դիւանի Բ. Ատենադըպրութեան բարձր պաշտօնն, զոր Ազգային պատկառելի ժողովն բարեհաճած է ինձ յանձնել և որոյ վասն շնորհակալիքս կը յայտնեմ խոնարհաբար։

Ուստի հրաժարեալանս մատուցանելով այդ պաշտօնէ իբր պարզ երեսփոխան՝ ընդերմ, Գերապատիւ Տէր, որ բարեհաճիր ընդունիլ ամենախորին յարգանացս անկեղծ հաւատին, որով մնում

Խոնարհ ծառայ

Տիգրան Հիւնքեարպէյեանեան

18 Մայիս 1884

Բէրա

**ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ.** — Քանի որ Հիւնքեարպէյեանեան էֆէնտի պարզապէս ճամբորդութեան պատճառաւ կուզայ հրաժարիլ Ատենադպիր պաշտօնէն, կարծեմ թէ՛ այլ ևս տեղի չկայ միճարանութեան առարկայ ընելու իւր զայս հրաժարագիր։

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Արդէն Դիւանս ալ նոյն բանն պիտի յայտներ, և խօսք ուզող չկայ։ Ուստի ով որ կ'ընդունի Հիւնքեարպէյեանեան էֆէնտիի սոյն պարզ հրաժարականը, թող հաճի իւր ձեռնամխից հաւանութիւնն յայտնել։

Ժողովն միտձայնութեամբ կ'ընդունի Տիգրան էֆէնտիի Հիւնքեարպէյեանեանի Բ. Ատենակայրութեան հետեւած սոյն պարզ հրաժարականն, և ըստ ներքին կանոնադրի՝ Գ. Ատենադպիր Յակօր էֆէնտի Պօլսակեան կ'ընտրուի Բ. Ատենակայր։

ԶԵՐԱԶ Մ. ԷՅ. — Մեր ներքին կանոնադրի 111րդ յօդուածն կըսէ որ երբ Գիւանի անդամներէն միոյն աժողոժ պարտաւ մնայ, խընդիրն օրակարգն կանցնի և յաջորդ նստին կը կատարուի ընտրութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Կ'առաջարկեմ որ Գ. Ատենադպրէն անմիջապէս ետքն առուեալազոյն քուէ ստացող երեսփոխանն ընտրուի Գ. Ատենադպրի, վասնզի խնդիրն օրակարգը անցնելով թէ՛ ժամանակ կանցնի և թէ՛ քիչ մը դժուար կը լինի գտնել մէկը որ Գ. Ատենադպրութեան պաշտօնն ընդունի :

Ատենապետ էֆէնտի յայտարարելով թէ Չերաղ էֆէնտիի գիտողութիւնն օրինական է, ըստ այնմ՝ նշանակել կուտայ Գ. Ատենադպրի ընտրութիւնն յաջորդ նստի օրակարգին մէջ, յարելով միանգամայն թէ նոյն օրը կրնայ խընդիր լինիլ ընտրութեան եղանակը :

4.

Կազմութիւն Ատենապետաց Դիւանի .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Թէ և ըստ օրինի ըրող Դիւանքներէ Դիւանք իւրեանց Ատենապետներն ընտրած ըլլալու էին այսօր, սակայն դժբաղդարար զօրսն միայն ընտրած են, որք են .

Զեռնհատութեան Դիւան — Իզմիրլեան Մատթէոս Եպիսկոպոս

Յարարերութեան Դիւան — Յովհաննէս էֆէնտի Թորոսեան

Նախածնունդութեան Դիւան — Մինաս էֆէնտի Չերազ

Կայրաւածոց Դիւան — Ղազարոսեան Գ. էֆէնտի :

Հետևաբար անկարելի եղաւ մեզ հրաւիրելով զանոնք, Ատենապետաց Դիւան կազմել, առ Սրբազան Նախագահն մատուցանելի ուղերձին սրատրաստութեանն համար, ուստի կը խնդրեմ միւս չորս Դիւաններէն որ ընդ փոյթ ընտրելով իրենց Ատենապետներն, անունն հաղորդեն Մայր-Դիւանին :

ՃԱՆԸՄԵԱՆ Մ. ԷՅ. — Իբր Համարակալութեան Դիւանի անդամ՝ ի Մատենադարան հրատիրած լինելով, ճիշդ որոշեալ ժամուն զըստ նուեցայ, բայց ընկերներէս ո՛չ զըբ գտայ և նամակ մը թողլով մեկնեցայ : Այժմ չ'եմ գիտեր թէ՛ ի՞նչ ընել հարկ է ընկերներս քուսմարելու և մեր Դիւանի Ատենապետն ընտրելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Գործնական ճանքան է Չեր ընկերներն տեսնելով, հետեմին համայայնիլ :

ՃԱՆԸՄԵԱՆ Մ. ԷՅ. — Այս պահուս լըսեցի որ Յովակիմեան Գառնիկ էֆէնտի մեր Դիւանին Ատենապետ առաջարկեք է Սըլվանեան Կարապետ էֆէնտին, ուստի ես եւս իմ քուէս նմա կուտամ և կը յայտարարեմ զայս պաշտօնապէս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ուրեմն Սըլվանեան Կարապետ էֆէնտի համարակալութեան Դիւանի Ատենապետ ընտրուած է, բայց օրինաց տրամադրութենէն շեղած չ'լինելու համար՝ խնդրեմ որ բոլոր հաղորդէք մեզ զայդ :

Ապա Ատենապետ էֆէնտի Թողովին կը հաղորդէ Մէջպուրեան Մկրտիչ էֆէնտիի հետեւեալ հրատարակիրն յանդամակցութենէ խմբադրութեան Դիւանի :

**Մեծապատիւ Ատենապետ Աղղային  
Երեսփոխանական Ժողովոյ**

**Տէ՛ր**

Խմբագրութեան Դիւանի անդա-  
մակցութեանս հրաւիրագիրն՝ որ Դիւա-  
նէդ ուղղեալ է ինձ, ամոռոյս 19 թուով,  
երէկ գիշեր ստացայ, և ահա կը փու-  
թամ ներկայիս հրաժարագիրս մատու-  
ցանել, առ Ձերդ Մեծապատուութիւն,  
աղաչելով որ առանց կրկնել տալոյ հա-  
ճիք ընդունիլ զայն:

Մնամ յարդանօք սիրոյ և մեծարանաց  
Մ. Մեզպուրեան

Ժողովն առանց զիտոզութեան ձեռամբար.  
ձով կԸՆԴՈՒՆԻ զայս հրաժարական:

**ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ.** — Կը խնդրեմ, Ատե-  
նապետ էֆէնտի, որ Դիւանութիւն մեր աշ-  
խատութեանց, անուամբ որոշենք Մէզպուր-  
եան էֆէնտի յաջորդն:

Երեսփոխանք կրկնելով Գուրգէն էֆէնտի  
այն առաջարկն, Մայր-Դիւանի կողմանէ Մէզ-  
պուրեան Մկրտիչ էֆ. ի յաջորդ կ'առաջար-  
կուի, Ի թիւնեան Կարապետ էֆէնտի, իբր  
անդամ Խմբագրութեան Դիւանի:

Ժողովն համակերպելով Դիւանի առաջար-  
կութեան, միաձայն հաւանութեամբ սոյն ընտ-  
րութիւնն կԸ ՎԱՆԵՐԻ:

5.

Հարցումն Կ. ԷՖ. Սրբաձեանի ի մասին Մեր-  
եմ-Գուլի Յ. ԷՖ. ի երեսփոխանական խնդրոյն:

Ատենապետ էֆէնտի ժողովոյ կը հաղորդէ  
Սրբաձեան Կարապետ էֆէնտի կողմանէ ներ-  
կայացեալ հետեւեալ հարցոգիրն:

Կը փափաքիմ գիտնալ թէ ի՞նչ ե-  
ղաւ Մերեմ-Գուլի էֆէնտի հրաժար-  
ականի խնդիրը և կը խնդրեմ որ բա-  
րեհաճի այս մասին տեղեկութիւն մը  
տալ ժողովոյս:

Աղղային Երեսփոխան  
Կ. Սրբաձեան

8 ՅՈՒՆԻՍ 1884

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այս հարցումն բնա-  
կանաբար Դիւանիս ուղղեալ է. այսօր բան մը  
չ'եմ կարող ըսել և բացատրութիւն տալ,  
վասն զի սրղի Դիւանս խնդիրն բննած չ'է,  
բայց կը խոստանամ որ այս մասին հարկ եղած  
բնութիւնն կատարելով, արդիւնքն հաղորդել  
Ժողովոյդ յառաջիկային:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Ես կ'առաջար-  
կեմ որ Մայր-Դիւանն ո՛չ թէ միայն Մերեմ-  
Գուլի էֆէնտի, այլև ուրիշ մի քանի երեսփո-  
խանաց հրաժարման խնդիրներն ևս սերտելով  
տեղեկագիր մը բերէ մեզ:

**ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ.** — Պէկեան էֆէնտի  
Երեսփոխանութեան խնդիրն ո՞ր մասց, կը  
խնդրեմ որ Մայր-Դիւանն այդ մասին ևս տե-  
ղեկութիւն մը բերէ Ժողովոյս:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Մայր-Դիւանս կը  
խոստանայ որ այդ աս կախ մնայած խնդիր-  
ներն ուսումնասիրելով իւր տեղեկագիրն հա-  
ղորդէ Ժողովոյ:

**ՋԱՅՆԵՐ.** — Եստ ըու, շնորհակալ եմ:

6.

Առաջարկութիւն ՚ի դիմաց զորն երես-  
փոխանաց ժողովոյ գումարման ժամերու փո-  
փոխութեան մասին:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Չորս երեսփոխանաց  
ստորագրութեամբ հետեւեալ առաջարկն ներ-

կայացուած է Վրասնիս զոր կը փութամ հա-  
զորդէլ ժողովոյդ :

Վսեմապատու Տէր Ատենապետ  
Ազգային—Ժողովոյ

Ներկայ ամարնային եղանակին մէջ  
կ'առաջարկեմ որ Ազգային—Ժողովոյ նիս-  
տերն փոխանակ ժամ 7 ին՝ գումարի 2  
ին և փակուի 5 ին : — Մեր ներքին կա-  
նոնադրի յաւելուածական տրամադրու-  
թիւնը արգէն համաձայն են այս առա-  
ջարկութեան :

Ազգային Երեսօխման  
Մ. Չօպանեան

8 Յունիս 1884

Սոյն առաջարկութեան ստիպողու-  
թիւն տալով կը խնդրեմք որ յառաջի-  
կայ նիստէն զօրծաղրութեան դրուի :

Յ. Պեկեան

Կ. Սըվաճեան

Յովնանես Թորոսեան

(Յե՛ր ընդհանրա՛մ)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ազգային ժո-  
ղովոյ նիստերն ասկից առաջ ևս առաւօտներն  
տեղի կ'ունենար, հետեւաբար իրրև օրինա-  
ւոր առաջարկ մը ես ևս կ'ընդունիմ այդ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Ես փոփոխութեան  
սկզբան հսկառակ եմ :

Ուրիշ խօսք ուղղ չ'իմեցով, Ատենապետ  
էֆէնտի բուէի կը զնէ վերոյիշեալ առաջարկն  
զոր ժողովն կ'ընդունի 1 ի ղէմ միաձայն հաւա-  
նութեամբ :

Հետեւաբար կ'որոշէ յետ այսու Ազգ.  
Ժողովոյ նիստերը գումարել առաւօտեան ժամ  
2 ին և փակել 5 ին :

Օ Ր Ա. Կ Ա Ր Գ

Տեղեկագիրք Համարակալութեան Դիւանի  
'ի վերայ կեդր. Եմտացոյցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ատենական զօրծա-  
ղրութիւնը աւարտած լինելով, այժմ սխտի  
անցնիմք մեր Օտկարդի միակ խնդրոյն որ է՝  
« Տեղեկագիրք Համարակալութեան Դիւանի 'ի  
վերայ կեդրամական Եմտացոյցի » : Ուստի ե-  
րեսօխմանը թեր օւ ղէմ կրնան խօսք առ-  
նուէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Համարակալու-  
թեան Վրասն թէև իր տեղեկագիրն բերած  
է, բայց տեղեկարկն՝ Թորոսեան Պողոս էֆ.  
ինչպէս գիտէք, բացակայ է, որո՞ւ պէտք է  
ուղղեմք մեր դիտողութիւններն և այդ տեղե-  
կագրոյն վրայ հարկ եղած բացատրութիւննե-  
րն օ՛ւսկից սխտի առնուք : Օրէնքը կը պո-  
հանջէ որ Վրասնի մը կողմանէ տեղեկագիր մը  
ներկայացուած պահուն, նոյն Վրասնի Ատե-  
նապետը և կամ Տեղեկարկը ներկայ գտնուին:  
Չեմ ըսեր թէ այն պատճառաւ ժողովն զազ-  
րեցնեմք, այլ միայն ցու կը յայտնեմ որ պա-  
տան ստացող երեսօխման մը ներկայ չ'ըրա-  
նուիր պայման կարևոր խնդիր մը յուզուած  
պահուն :

ՉԵՐԱԶ Մ. ԷՅ. — (Բեմն էլնելով) Հա-  
մարակալութեան Վրասնի կողմէն մեզ ներ-  
կայացեալ երկու տեղեկագիրք կը յուզեն  
բազմաթիւ խնդիրներ, զորս խզճամբ երես-  
փոխան մը պարտաւոր է քննութեան առնուլ  
Քաղաքական ժողովոյ պաշտօնագրերուն և  
Տնտեսական խորհրդոց Եմտացոյցներուն  
հետ :

Առաջին տեղեկագրի ԴՐՈ. էջը կը  
պարունակէ Քաղաքական ժողովոյ սա առա-  
ջարկը. « Չեր Ազգային Վարչութիւնն. . .  
կ'առաջարկէ պատկառելի ժողովոյդ ըստ Սան-

մանագրութեան՝ աղգային անհատից պարտուց և խրաւանց դրապիս գործադրութեան վճիռն արձակել, որով մինչև աստիճան մը հաթութից գանձումը ապահովուի, և այս վստահութեամբ կարելի լինի ելմտացոյց մը սահմանել : » Կը խոստովանիմ թէ՛ ֆաղաքական ժողովոյ չափ լաւատես չ'եմ, հաւատալու համար թէ այդպիսի վճիռ մը պիտի բաւէ՞ Պատրիարքարանի ելմտական կացութիւնը բարւոքելու համար. վճիռ արձակելը դիւրին է, զայն գործադրելն է դժուար : Նոյն ժողովը որ մ'ալ եկաւ և առաջնորդութենէ խոյս տուող եկեղեցականները բռնի գաւառները յղելու վճիռ խնդրեց մենէ. երեսփոխանք պատասխանեցին թէ այդ արտօնութիւնը տրուած է արդէն, այլ Վարչութիւնը չըկրցու եկեղեցական մը շարժել իւր տեղէն :

Համարակալութեան Գիււանը նոյն տեղեկագրի 20 ռէ էջին մէջ կը պահանջէ որ Ազգ. ժողովը 'ի պատասխանատուութիւն հրաւիրէ 1878-80 ամի ֆաղաքական ժողովը, սահմանեալ ելմտացոյցին դէմ մեղանշելուն համար, կամ տժգոհութեան քուէով մը փակէ խնդիրը. նոյնը կ'առաջարկէ 1880-82 ամի վարչական խորհրդոյ նկատմամբ, սահմանեալ ելմտացոյցին և իւր պաշտօնական յայտարարութեան դէմ մեղանշելուն համար : Համամտելով այս երկու առաջարկներուն, արդար կը դատեմ որ Վարչութեան միջոցաւ բացադրութիւն խնդրուի յիշեալ մարմիններէն, որք, եթէ չը կարենան իրենց ընթացքն արդարացնել, արժանի են ստանալ ո՛չ միայն դժգոհութեան քուէ, այլ, ըստ ինձ, վճիռ մ'ալ որ իրենց անդամք այսուհետեւ չը կարենան անդամակցիլ ո՛չ ֆաղաքական ժողովոյ եւ ո՛չ Վարչական Խորհրդոյ : Համարակալութեան Գիււանը կը թուի մտնալ թէ անհրաժեշտ է զեղծ պաշտօնատարներն հեռացնել աղգային պաշտօններէ, զեղծումն ըստ կարի արմատախիլ ընելու համար :

Համամիտ եմ Համարակալութեան Գիււա.

նի երբ իւր տեղեկագրի 21 ռէ էջին մէջ Ազգային ժողովէն կը խնդրէ յանձնարարել ֆաղ. ժողովոյ որ. աւանդից անտուկին հաշիւը տայ եւ հին պահանջից եւ պարտուց ցանկը ներկայէ, պատրաստելի ելմտացոյցը 1884-85ի համար սահմանել, ինչպէս որ Տնտեսական Խորհուրդն ըրաւ արդէն, եւ ֆաղ. ժողովէն պահանջել մուգաթայի եւ քանցելիքի մնացորդաց հաշիւը : Այլ երբ կը պահանջէ ստիպողութիւն տալ տրոց կանոնագրին գործադրութեան կ'ուղեմ պահ մը կանկ առնուլ եւ մը տաճել :

Եթէ Համարակալութեան Գիււանի կարծածին չափ շահաւոր եւ գործադրելի լինէր 1879ի Տրոց կանոնագիրն, թաղական խորհուրդք պիտի փութային գործի ձեռնարկել : Բերայի թաղական Խորհուրդին անդամ եղած պահուս դիտած եմ թէ սովորական տուրքերն իսկ մեծ դժուարութեամբ կ'առնուին ժողովուրդէն, ո՛ւր մնաց յաւելեալ տուրքեր : Մեր դատարարակութիւնն ա՛յնքան անհոգի դարձած է որ աղգայինք կը ցրտանան երբ Հայ լինելը սուղի նստի : Երբ Երուսաղիմայ տարտուց բարձման խնդիրը վերջին անգամ ծագեցաւ այս ժողովոյ մէջ, Տրոց կանոնագրի կուսակիցք պնդեցին թէ գաւառացիներէն շատեր անկարող են տարին 3 դրշ. վճարել և պահանջեցին որ այդպիսիք 1 դրշ. տան. արդ 3 դրշ. չը վճարող բարեպաշտ գաւառացիին ինչպէ՞ս պիտի հաճի կեղրոնին մէջ 20 դրշ. տալ, զի այդ կանոնագիրը 20 դուրուշ տուրք կը դնէ բեռնակրին վրայ : Քանի՛ քիչեր սիտի յօժարին տարեկան 40—100 դրշ. վճարել ըստ կանոնագրին, մինչև իսկ երբ հաւատան թէ այդ գումարներ օգտակար պիտի լինին աղղին, զի Տեղեկագրին հեղինակները կը սխալին կարծելով թէ այդ հաւատարի պակասութիւնն է որ կը դրդէ տուրք չը վճարելինչ որ կը սլակսի ժողովրդեան մէկ կարևոր մասին, պարտաճանաչութեան զղացումն է այն : Համարակալութեան Գիււանն իւր ուշխատութեան այս մասին մէջ դեղեցիկ երաղներէ

յափտակուած կը թոյն և կը չափը կանոն և թուական, և իւր խանդն աւելի կը վառի յիւլելով թէ Սահմանադրութեան նոր ծնած պահուն 150,000 զրուչի մտ զուժար մը գանձուած է տեղացի ընտրողներէն : այլ կը մտնայ թէ Սահմանադրութեան ծնունդը արտասովոր ցնցում մը տուած էր ժողովուրդին և թէ ազգերու կենսոց մէջ հաղուաղ էպ են այդպիսի մեծազորք թուականներ : Սահմանադրութեան հաստատմանէն յետոյ ալ պատահեցան յուղիչ խնդիրներ, որոց համար ազգը մեծ գուժարներ նուիրեց : այլ այսպիսի բացառիկ իրողութեանց վրայ պէտք է հիմնուել երբ կոչուինք քննել մեր սովորական հասութից խնդիրն : Ուստի առանց հասուն քննութեան չ'եմ կարող ընդունիլ Համարակալութեան Գիւանի առաջարկն, եւ օգտակար կը դատեմ որ Ազգային տրոյ խնդիրն յատկապէս Սրակարգն անցնի, ժողովոյ նոր տարրերուն քննութեանն ալ ենթարկելու համար :

Համամիտ եմ Գիւանի յաջորդ առաջարկին, որէ՛ յանձնարարել Արչութեան որ անուղղակի տրոց կանոնադիրը պատրաստէ : Այլ համամիտ չ'եմ իրեն երբ կը խնդրէ ժողովէս յանձնարարել Արչութեան որ տրոց հաւաքմոն պաշտօնն այնփոյթ թաղական խորհուրդներն առնուելով յանձնէ քահանայից, կէս մասն իրենց ապրուստին յատկացնելով : Համարակալութեան Գիւանը ըստական միամիտ պէտք է լինի հաւատարու համար թէ այսպիսի սպառնալից անօրինութիւն մը կրնայ սուստ հասոյթ բերել : Թաղական Խորհրոցոց անդամք ընդհանրապէս իրենց թաղին մէջ մեծ ազդեցութիւն ունին եւ ժողովուրդի զանազան դասերուն հետ նիւթական կամ բարոյական անձուկ կապեր, զի դժբախտաբար շահուց համըթացութիւն մ'է որ կը կառավարէ զաշխարհ եւ դեռ հետի է այն թուական ուր անխառն ազգասիրութիւն մը պիտի վարէ ամեն բան, արդ, երբ ընկեալութեան մէջ ներդրածական դեր մը կատարող աշխար-

հականք չը յաջողին տուրք հաւաքել թաղեցիներէն, ի նշտէս պիտի կարենան յաջողիլ մեր քահանայք որք ասիկար են :

(Չանաղան նստարաններէ Երեսփոխանք զրոտորութիւն կընեն ապիկար բանին դէմ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Ընդմիջելով զԱտենարանն) կը հրախրեմ Ատենարան էֆէնտին որ ճշդէ ապիկար բաժին նշանակութիւնը :

ԶԵՐԱԶ Մ. ԷՅ. Անկարող ըսել կուզեմ, Ատենապետ էֆէնտի, (Շարունակելով) եւ միթէ ասոր փորձը տեղի չունեցա՞ւ երկու տարի յառաջ, երբ Երուսաղէմի պարտուց բարձման համար տարեկան 3 զուրուչ նպատի հաւաքուած քահանայից յանձնուեցաւ : Ի՞նչ կրցան ընել. — Ոչինչ : Նոյն տեղի պիտի ունենայ եւ աւելի իրաւամբ, եթէ առաջարկուած ապարգիւն սպառնալիքը կատարուի : Ուստի արժան է որ գէթ անգամ մ'ալ քննութեան առնուի այս խնդիրն, իբր յարակից Ազգային տրոց խնդրոյն, զոր առաջարկեցի Օրակարգն անցնել :

Համարակալութեան Գիւանի յաջորդ առաջարկն է 1883 Մայիս 1 էն գործադրել տրոց կանոնադիրն : Աւելորդ է բացազդել թէ այս ալ յարակից է Ազգային տրոց խնդրոյն, զոր առաջարկեցի Սրակարգն անցնել :

Նոյն տեղեկագրի 22 րէ 22ը կ'առաջարկէ քննել Պատրիարքարանի պաշտօնէից արժանեաց եւ հանգստեան թոյակի խնդիրն, նաեւ դատարարականութեան եւ զաւառական այցելութեանց եւ հոլութեանց վճարման խնդիրն : Առաջին մասը կ'ընդունիմ յօժարակամ, եւ այնքան աւելի ուրախութեամբ որքան որ տխրութեամբ դիտեցի թէ միեւնոյն Գիւանը միեւնոյն պաշտօնէից նկատմամբ տարբերող կը տածէ իւր երկրորդ տեղեկագրին մէջ, « Պատրիարքարանի մէջ նստող եւ գործող պաշտօնէից » աշխատանքը « երրորդական »



չորրորդական պիտոյք » անուանելով և յայտարարելով թէ « գաւառաց պիտոյքը Պատրիարքարանի մէջ նստող եւ թաղարի ու կոնդակ գործ պաշտօնէից միջոցաւ միայն » չը կրնար հագագուել, մինչ ձեռի համար գրուած այս միայն բառին տակ հազիւ կը սքողուի այն արհամարանքը զոր Համարակալութեան Գիւանի անդամը կ'ըզան Պատրիարքարանի պաշտօնէութեան նկատմամբ : Արդեօք Պատրիարքարանի մէջ նստե՞լն է այդ պաշտօնէից յանձանքը, ի՞նչ, կ'ուզէիք որ պարէր՞ն իրենց գրասենեակներուն մէջ : Եթէ Պատրիարքարանն անկարող է հողաւ գաւառաց պիտոյքը, ինչ՞ե համար գաւառացիք անոր կը դիմեն անդադար : Ես իբր պաշտօնակց ծառայած եմ Պատրիարքարանի մէջ, եւ փորձառութեամբ դիմեմ թէ Պատրիարքարանի աշխատութեան, ամենամեծ մասը գաւառաց եւ գաւառացւոց նուիրուած է : Տեղեկագրին այս հատուածը ճարտարութեամբ կը հասկցնէ ուշիմ ընթերցողին թէ Պատրիարքարանը շատ օջտակար հաստատութիւն մը չ'է, բանի որ քաղաքներէն ստեղծ անլսելի կը մնան, այնպէս որ եթէ այս սկզբունքը խիստ տրամաբանութեամբ մինչեւ իւր վերջին եզրակացութեանը տարուի, պիտի ձետուի թէ պէտք է ջնջել Պատրիարքարանը նիւթապէս ալ, ինչպէս որ տարիներէ ՚ի վեր կը փորձուի ամենակերպ անուանարկութիւններով ջնջել զայն բարոյապէս : Ի՞նչ է այս հայածանքը, ի՞նչ կը նշանակեն այս կատարի յարձակումները Պատրիարքարանի դէմ միթէ հակադասին կամ օտարազդի հինարկութիւն մ'է այն . ո՞չ ապաքէն Հայոց ազգին Պատրիարքարանն է, ուր բազմող Բարձրատիճան Եկեղեցական հասարակաց հայրն է եւ աշխատող կրօնական ու աշխարհական անձեքք մըր հարստութեան եղարյներն են . ո՞չ ապաքէն Սահմանադրական Վարչութեան մը կեդրոնն է, որ կոչուած է ամենօրեայ ծառայութիւններ մատուցանել մեր դժբախդ ազգին : Երբ տառապեալ գաւառացին հարստահարութեան, ժանտախտի, երկրաշարժի, հըր-

դեհի, սովի եւ ուրիշ ո՞ եւ է ճգնաժամի պատահի, իւր առաջին մտածումը կը լինի հեռագիր եւ խնդրագիր տեղացուներ ՚ի Պատրիարքարան, որոյ մեծ եւ փոքր պաշտօնակցը կը փութան գրել, խօսիլ, գործել, արկտը գարմանելու համար : Ամեն անգամ որ մեր հեռաւոր եւ մօտաւոր եղբայրը զլուխը նեղը զոյ, ամեն անգամ որ նոյն իսկ Մարաքաղաքիս մէջ վիշտ մը ծաղիլ, ամեն անգամ որ մինչեւ իսկ մեր օտարաբնակ եւ օտարազգատակ ազգակցաց փորձանք մը պատահի, ո՞վ է որ պաշտպան կը կանգնի . — Այդ այնքան քննադատուած եւ պատարակուած Պատրիարքարանն : Միայն Պատրիարքական Ելխանութիւն մ'ունինք կանդուն մնացած, եւ զա՞յն ալ կուզեն լսողել : Պատրիարքարանը գաւառացոց յուսոյ խարխիսն է, եւ կ'ուզեն ջանջախնել զայն յանուն գաւառական շահուց : Նա միութեան կապ է մեր ցիր ու ցան ազգայնոց միջեւ, եւ վիտիանակ ամբասնդելու, կը վորձեն քայքայել զայն : Համարակալութեան Գիւանը կը հռչակէ թէ Պատրիարքարանի պաշտօնէութիւնը չորրորդական է, իսկ դատարակութիւն եւ գաւառական հովութիւնք առաջին . սակայն այդ հովութեան Պատրիարքարանի ազդեցութեամբ կը զորանան գաւառաց մէջ, եւ երբ Առաջնորդ մը վտանգի մը պատահի, Պատրիարքարանէն կ'ակնարկէ իւր փրկութիւն, գիւղացին, որոյ ցորենի դէղը յուղիահարի մը հրձկութեան զո՞ կ'երթայ, այս վնասին անմիջական դարմանը կը մտածէ քան թէ կրթական յայտնադրին բարեփոխումը, զի նախ հաց եւ սպա գիրք. երբ կրթական գործին դէմ խոչնդոտ յարուցուի, դարձեալ Պատրիարքարանին է որ կը դիմուի, մենք, որ 1880 էն ՚ի վեր գործն զեր մը կը կատարենք գաւառաց մէջ կրթութիւն ծառայող Ընկերութեանց մէջ, ահա կը վկայենք թէ, ամեն անգամ որ մեր Ընկերութիւնը փորձանքի մը պատահած են, Պատրիարքարանի դիմած ենք եւ պաշտպանութիւն գտած . չա՞տ վարդապետներ եւ վարժապետներ պի-

տի սասանէին, եթէ Պատրիարքարանն իրենց ճակատագրին թողուր զանոնք :

**ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ.** — (Ընդմիջելով) Ներկայացեալ տեղեկագրին մէջ միայն բառ մը կայ զոր Առնեաբան է ֆէլետին կը մտնայ յիշելու :

**ԶԵՐԱԶ Մ. ԷՖ.** — (Պատասխանելով) Այդ միայն բառը արդարացման բայ դուռ մը ձգելու համար զիտմամբ զրուած է : (Շարունակելով) Երկրորդ մասը, այն է դատարարական և զաւտական այցելութեանց և հովուութեանց վճարման խնդիրը, ում նոր էրմոսացոյցը նուիրած է 45,000 զրշ.ի դժուարագոնմէլի գումար մը, երմոսական արդի կացութեան մէջ զրեթէ անիրանտի է դժբախտարար . և այս այնքան ճշմարտ է որ Համարակալութեան Դիւանն իսկ հարկ տեսեր է արտասովոր զորման մ'առաջարկելու, այն է պաշտօնէկց ամսականաց վրայ 20 0/0 զեղջ մ'ընել և զայն յատկացնել դատարարակալութեան ծախուց : Այլ ևս աննայն զորութեամբ կը մերժեմ այսպիսի զեղջ մը, որ կը տարածուի Պատրիարքէն սխեալ մինչեւ յ'ետին պաշտօնէին վրայ : Երբ Պատրիարք կ'ըսեմ մի կայծէր ինչ կը խօսիմ 'ի սրաշարձութիւն Ներսէս Սրբազանի . նա ոչ եւս է Պատրիարք, այլ Կաթողիկոս աննայն Հայոց . ևս արագաց Պատրիարքին է որ կ'անխորհեմ, որոյ անձը զեռ անձանթ է ամենուս : Այսպիսի զեղջ մը կրսեմ, անդառնաճ է Պատրիարքի մ'արդէն անբուական ամսականին նկատմամբ . այլ Պատրիարքէն ասելի Պատրիարքարանի վարր պաշտօնէկց վրայ է որ կարեկցութիւնս կը շարժի, այն պաշտօնէկց որբ երկար ամբեր 'ի վեր ազգին կը ծառայեն, հազիւ իրենց օրու պահիր հայթայթելով : Մեծ անուետագէտ մը, Մօլիմտի, կը զրէ թէ « Տեսեազիտութիւնը հաշտ է բարոյականի հետ » . արդ . ո՞ր բուրջական, ո՞ր խիղճ կը ներքէ 20 0/0 զեղջի մը

դատարարութեւ այնպիսի պաշտօնէկցներ որոյ ոմամբ, 150 զրշ.ի ամսական մ'առնենալով, չոր հոցով կ'ապրին արդէն մեր բարձրագոյն պաշտօնական սեմին վրայ : Ինչ կրնայ լինել այդպիսի անգթութեան մ'արդիւնքը, եթէ ոչ ստիպել պաշտօնէայն որ սովամոճ լինի կամ անհաստատարին կը խտտովանիմ թէ Համարարակալութեան Դիւանի կրքասեր և զաւտասեր անդամներէն չ'ի սորտեր սցտիսի անխղճութիւն մը . և միթէ այսպիսի զեղջով է որ պիտի յաճողինք մըւամ տալ զստտարակալութեան սրբաշուն գործին : Ոչ, ո՞չ . լուսազայն է որ Պատրիարքարանի հասցիքն ամենցնելու միջոցներուն վրայ խորհրդակցինք ենք, և միայն այն ստեն դատարարակալութեան համար նոր ծախուց դուռ բանանք երբ դժուարագոնմէլի նշանակուած հառթք իրականի միտուին մեր ջանքով : Աստի, արդէն առաջարկած լինելով Սրբիարգն անցնել Աղբ . տրոց խնդիրը, հարկ կը համարիմ այս խնդրոյն ըստանալիք նորատուար լուծածէն յետոյ զումտներ յատկացնել կրթական և հովուական պիտոյից :

Ինչպէս իմ Համարակալութեան Դիւանի յաջորդ ստաջարին (Էջ 23), որ է Հիւանդանոցի Հողաքարծուութեան, Կալաթայի կալուածոց Հողաքարծուութեան և Աղբային լուծեալ Ընկերութեանց հաշուները քննող յանձնարար մը կ'ողմնէ, և կը յաւերում որ այդ Յանձնարար մը ուրիշ համանման մարմնոց հաշիւներուն վրայ ալ անխորհ մը ձգէ :

Գտնով վարչութեան ներկայացուած երեք էրմոսացոյցներուն, տեւորը է խօսել այդ ծրագիրներուն վրայ, զի ունինք այժմ կանոնաւոր էրմոսացոյ մը Տեսեալական Խորհրդոց աշխատասիրութեամբ : Գոհացոյցիչ կը զուտենմ զայն, և արտիս եմ որ Տեսեալական Խորհուրդը կրցած է յաշտ կամ նուազ գումարով տող զանտղան պահանջմանց : այլ ևս անաչառ երեւոյթուան, արգար կը գտնեմ Համարակալութեան Դիւանի զիտողութիւնն այն

տորրերու թեան նկատմամբ որ կը նշմարուի երկտայցյցին և նախորդ ծրագիրներուն գանձելի գումարներուն միջև և ենթացական գումարներ կրնան առանձնական լինիլ, այլ այնպէս չէ՛ արարչով հասցեւորուող նկատմամբ : Աւստի կարեւոր կը դառնամ որ, ինչպէս սովորութիւն է, Սահմանադրական ժողովոյ մէջ, Երկտայցյցի Մասնախումբ մը կարգուի նշանակելու թուանշանոց մանրամասնութիւններն ուսումնասիրելու և մեզ տեղեկագրելու համար, և ես յայնժամ միայն պիտի պարզեմ զխտազութիւնքս երկտայցյցի մասին :

Գատարխարութեան երկտայցյցին նկատմամբ Համարակալութեան Գիւանի առաջին տեղեկագիրը կծու անխարութիւններ կ'ընէ Ս. Պատրիարքի ղեմ, մինչ երկրորդը, կտրվող իր պարբերը կ'ուղչէ Տնտեսական Խորհրդոյ ղեմ : Կուսակցական սգի բարոյ այդ տեղեկագիրը անգամ մ'ալ կը յուզեն խնդիր մը որ ստեպ յուզուած է աստ և այլուր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — (Ընդմըջելով) կը յիշեցնեմ Առեւարան էֆէնտիի որ այդ տեսակ անխարութիւններէ զգուշանայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Գրգռի՛չ անխարութիւններ :

ՁԵՐԱՋ Մ. ԷՃ. -- (Առ Առեւնայեան) Եթէ դառնութեամբ կը խօսիմ, պատճառը սա է որ Համարակալութեան Գիւանը կծու լեզու գործածած է Ս. Պատրիարք Հօր ղեմ, որ բացակայ լինելով չէ կարող ինքզինքն արդարացընել : Բայց բարեբաղդաբար մենք հոս եմք և տարակից չ'կայ թէ ազգին մեծամասնութեան հետ մեր պարտին է պաշտպանել զՆորին Արարչութիւն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Ձրի պաշտպանութիւններ են տոմար :

ՁԵՐԱՋ Մ. ԷՃ. — Ձեր բրածներն ալ ձրի զրարարութիւններ են ուրեմն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Ս. Պատրիարքն եթէ աստուածայեղ իսկ ըլլայ, դարձեալ չը կրնար զերծ ըլլալ բնազատութենէ, ասիկայ լա՛ւ գիտցէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Կը խնդրեմ Ձերալ էֆէնտիի որ ասոնց ընդմըջմանց պատասխանելու, իր խօսքն շարունակէ :

ՁԵՐԱՋ Մ. ԷՃ. — (Շարունակելով) Ժամ է որ երկու խօսք ընենք այս մասին և ցոյց տանք թէ ի՞րքան անիրաւ են ասոնք որքան կարելին կը պահանջեն Ներքէս Պատրիարքէն և, երբ չ'իրագործուի անկարելին, կը զըրպարտեն զայն իրր անտարբեր ներքին բարեկարգութեան և թշնամի ազգային գաղտնասրտութեան : Կրթութեան դատը բարեբախտարար անբան ժողովրդական եղած է մեր մէջ որ անհար է երեւակայել Պատրիարք մը և Վարչութիւն մը որք չ'ցանկան և չ'տենջան կրթական մեծագործութիւն մը կատարել իրենց օրով . այսօր եթէ եկեղեցականաց առեւնէն յետիւճ և ամենէն տգէտը Պատրիարք ընէք, և թէ նա, ձգենք ազգասիրութիւնը, ամենափոքր փաստիրութիւն մը իսկ ունենայ կամ իր պաշտօնը պահպանել ուզէ, իր առաջին փոյթը պիտի լինի յիշատակել ճոտայութիւն մը մատուցանել Ազգ. գատարախարութեան, ամենէն ամենչան Վարչութիւնը պիտի ջանայ նշանաւոր հանդիսանալ կրթական գործ մ'արտադրելով . զայս ընդունել յետոյ իրր ընդհանուր սկզբունք, զիբն է համոզուիլ թէ, եթէ Պատրիարք և Վարչութիւն զիս չը կրցան կեղրոնական ուսումնարան մը բանալ, միջոցները պահած են իրենց, այսինքն զրամը : Ձիտոց պէս ինքնագոյ և ինքնակեաց ժողովուրդ մը չ'ենք, ինչ որ կատարուած է արիչ ազգաց մէջ, բնու

կանարար մեր ազգին մէջ ալ պիտի կատարուի մի և նոյն օրինոր : Արդ , ուրիշ ազգաց մէջ յառաջողութիւն ինչը աստիճանապէս տեղի ունեցած է , և մեր մէջ չ'է կիսողոյ ոյլապէս լինիլ : Սրտին թոյլը չ'ունի սահման , ոյլ անողոր իրականութիւնն է որ կը տնօրինէ աշխարհի ճակատագիրը : Հայոց ազգին վիճակը յուսահատութիւն չ'ազդեր ինձ , զի մեզ յատուկ չ'է և բոլոր քաղաքակիրթ ազգաց վիճակը եղած է . անոնք ոտն առ ոտն յառաջացած են դատարարական շահին մէջ և ոչ ընդոտ արշաւանօր , ինչպէս պիտի համարուինք երբ ակնարկ մը ձգենք իրենց պատմութեան վրայ :

Յրանասյիք մեր ազգին տեւի ծանօթ ժողովուրդն են . արդ , իրենց կրթական պատմութիւնը կը յայտնէ մեզ թէ Յեղատիտական փառօղը , որ աղբուսպէս հոչումեց նախակրթութեան ստիպողականութիւնն , չը կրցաւ նպաստել տնոր , ստակ չը գտնելուն համար . Նորօթնն Ա . որ աշագին գումարներ վատնեց մէկ ստնդիմ չ'է տուած նախակրթութեան համար , ինչպէս կը վկայեն իւր ելմտացոյցը . Կայսրութենէ յետոյ թողութորական Վերահաստատութիւնն Յրանասյի մէջ առաջին անգամ լինելով նշանակեց դումար մը նախակրթութեան համար , 30,000 Փրանկ , գրեթէ մենէ կէս դար յառաջ . և միթէ ամօթ է մեզ 30,000 դրը նշանակած լինիլ ոյց մտանն , ինչպէս Կ'ախմարիէ Համարակարութեան Դիւանի առաջին տեղեկագիրն . միթէ ամօթ է որ Հայր այսօր Ա դր . զոհեն մի քանի համար ու 4 1/2 դր . զոհեց Յրանաս առաջին անգամ , և միթէ մենք կրնանք պարծիլ թէ յառաջողութեան մտանն լոկ կէս դարու տարբերութիւն ունինք Յրանասյիններն : Նոյն տեղեկագիրը դանտեթեամբ և վստտութեամբ Կ'ախմարիէ թէ Պատրիարքարանն իւր հաստեթից 1/10 ը հաղիւ կը նշանակէ դատարարութեան համար , ալ կ'ազդիտանայ թէ , զոյցէ Զուպեթիէն դատ , չ'կայ երկիր մը որ

յաջողած լինի ձեռք բերել ոյգպիտի համեմատութիւն մը , մարդկային ազգը երջանիկ պիտի լինէր եթէ կարենար իրեն համար նշանակել ինչ որ նշանակած է Պատրիարքարանն Հայ ազգին համար , ընկերարան խնդիրը կարեւոր քոյլ մը պիտի սանուր և հոյսի խնդիրը պիտի հասնէր այն լուծման ուժ համար կը վրդովին ազգը և աղինք :

Մակիցն օրս մը ենթադրենք թէ Պատրիարքարանը իւր արդի երմտական կացութեան մէջ կարող է 30,000 վճարել և կրթութեան թշնամի լինելուն համար է որ չը վճարեր , ինչպէս Կ'ախն հակառակորդը առանց իրենք իսկ հաստատու իրենց ըսածին : Երբ Երուսաղէմի պարտուց բարձման խնդիրը ծագեցատտտ , Փարիսեան և Ֆէլիտին յանիրաւի առարկեց թէ միտյն Պօլսեպիք մասնակցելու էին անոր և ոյլք իրաւամբ պահանջեցին որ դաւաճանացուց վրայ դրուելը տուրքը Պօլսեցոց վրայ ալ դրուի հաւատարապէս . ուստի , քանի որ սարսուճ հաւատարութիւնն իրաւանց ալ հաւատարութիւն կ'ենթադրէ , պէտք պիտի լինի Պատրիարքարանի 30,000 դրը տեղացի և դաւաճանցի զարոցաց բաշխել հաւատարապէս , ժամանակն որ Պատրիարքարանի հաստեթից մէկ մտք գաւառներէ կը հայթայթուի . և ո'չ ապաքէն մեր անթիւ վարժարանաց իւրաքանչիւրին բաժին պիտի լինի հաղիւ մի բանի զրո . որ չը պիտի բաւէ բարեկարգելու մեր կրթարանաց ամենայեան յարին իսկ զոր չեմ ուզեր անտանել . և այս ընջին գումարին համար է որ երկիրը երկիր կը գորդեն և ազգին խազարութիւնը կը խտովեն պարբերաբար :

Մակիցն , ինչպէս ըսի , Պատրիարքարանը իւր արդի երմտական կացութեան մէջ անկարող է 30,000 վճարել ամբողջապէս , մինչև իսկ եթէ վճարել խոտայած լինի Պատրիարք մը կամ Վարչութիւն մը , հարցումներէ և հարցապիգումներէ ճարահատեալ : Այս անկարելիութիւնը ցու կ'ազդէ ամենուս , զի չը կայ այս ծագողից մէջ անհատ մը որ դատարար

կոթեանն և դաւանական այցելութեանց և հովութեանց կարեւորութեանը համոզում չը լինի, և մտաւանդ ինձ, որ ժխել Սիմնի հետ կը խորհիմ թէ & Նախարկութեան երևոս-  
ցոյցը միակ երևոսցոյցն է որոյ ստուարանալը կարենայ տեսնել մարդ անխառն դոճոճախու-  
թեամբ ։

Եւ միթէ արդա՞ր է բոլոր յանձնարը վե-  
րադրել Պատրիարքաց և Վարչութեանց ։ մի-  
թէ Ժողովս ալ չունի՞ իւր պատասխանատու-  
ութեան բաժինը ։ Ի՞նչ պիտի օրատասխանենք  
երբ Վարչութիւնն ըսէ մեզ . « Ի՞նչ բճեանի  
կրթական օրինադրքին համար 200 սակի զոճե-  
ցինք, և Չեզ ներկայացուցինք, որպէսզի բըն-  
նէք, որբագրէք, վաւերացունէք և ազգային  
դատարարկութեան ուղեցոյց մ'ընէք զայն .  
այլ զուր 1881 Ապրիլ 2 կն 'ի վեր ներատուլու-  
թեան իսկ չ'տոյր զայն, և մեր ազգութիւնը  
մտացոյցին 200 սակոց զոճողութեան պտուղը  
փոշիներու տակ թաղեցիր ։ » Ի զուր 1882  
Սեպտեմբեր 23 ին ես, նորձտիր երեսխոխան  
որ կը հաւատայի թէ ներքին բարեկարգութեան  
դատշ անկեղծ փաստորոշներ ունի տատ, տ-  
աւաջարկեցի Չեզ՝ մի քանի շարթի նիստ զու-  
մարեով յաջորդարար՝ Կրթական Մրագիրը  
բննելու և վաւերացնելու ձեռնարկել ստիպու-  
ցաւոյս . ազգօգուտ զործի մը համար մի քանի  
թամ զոճել կտաւարկելի երեսխոխանութեան,  
և անոնք խո, որ այժմ՝ ամենէն տւելի կա-  
ղաղակն 'ի նպատտ դատարարկութեան, չը  
ձայնակեցեան և ընդգիմայան ինձ, և առա-  
ջարկս զնայ կորչիլ Նախաձեռնութեան Դի-  
ւանի անցատակ անդունդին մէջ ։ Այս Դիւանը  
նորանոր պայմանո՞վամեր տանելով հանդերձ,  
անտարբեր մնաց, և երբ, ճարահատեալ, Ներ-  
քին Կանոնադրին տրամադրած՝ օրարաւանոց  
բուէն առաջարկեցի իրեն համար, այս վար-  
մանքն անորաբարթութեան ովանայ ։ Նոր  
չոյս մ'առի երբ Նախաձեռնութեան Դիւանը  
նորոգուեցաւ և Փախաղեան էֆէնդին անոր  
Ատենապետ կարգուեցաւ, այլ այդ Դիւանն ալ

ոչինչ դործեց, և չը գիտեմ թէ ո՞ր մտացած  
է դրասոր առաջարկս ։

ՓՈՒՍՁԵԱՆ Ս. ԵՏ. — (Ընդմիջելով) Զե-  
րազ էֆէնդին կամ՝ կը սխալի կամ՝ կը սօճէ,  
մեր Դիւանին այդ տեսակ առաջարկութիւն մը  
չէ յանձնուած նախորդէն ։

ՋԵՐԱԶ Մ. ԵՏ. — Ուրեմն Մայր-Դիւանին  
բով մնացած է ։ Կաղաչեմ որ արդի Դիւանն  
անցաւոր յանձնէ զայն Նախաձեռնութեան  
նորձտիր Դիւանին, որպէսզի Պատ. Ընկերու  
կցացս հետ ես բնեմ իմ առաջարկս և տեղե-  
կազիրը ներկայանայ յաջորդ նստին ։ (Մարտ  
նակելով) Այս այսպէս լինելով, Աղգային Ժն-  
դովն ինչպէ՞ս պիտի կարենայ արդարացնել  
իւր անտարբերութիւնը կրթական զործին նը-  
կատմամբ, և ի՞նչ սրտով պիտի շարունակենք  
դատաւարտել Պատրիարք և Վարչութիւնն ։

Կը վերջացնեմ, օգտակար դատելով որ  
սնձիւր թաղի մէջ գործն երկտատարդաց  
խաւրքեր կարգնին մըլում առաւ համար ազ-  
գային տրոց զանձման, որոց աճումէն կախում  
ունի կրթական և հովանական պէտքերու զոճա-  
ցումը ։ Այսպիսեաց հրուէլն աւելի լսելի կը  
լինի քան վարձեալ հաւորչի մ'աղբրան, պատ-  
կաւ կաղղէ և ազգայնոց մէջ պարտաճանաչու-  
թեան զգացումը ծաւալելու կը նպաստէ ։

Բոցոց աղգային դատարարկութեան իղն-  
դիրն ի՞նչ սխալ լինի մինչև այն ատեն, կը  
հարցուի ինձ ։ — Պիտի լինի ինչ որ է այսօր և  
ուելի ևս պիտի դարդանոց, մինջև իսկ առանց  
աղբաւ Պատրիարքարանի մը նպաստներուն ։  
Ի՞նչ կը կործէք, միթէ ողղը թեւերն ծալած  
մեր 30,000 զուրուլին կողմէ՞ ։ Աչ մի դա-  
ւաւ, ոչ մի թաղ կը մտարեք այդ նպատար,  
ամենն ալ իրենց յոյսը իրենց վրայ դրած,  
կրթութեան կ'աշխատին եւանդով, և ասոր  
համար է որ հազարաւոր դպրոցներ բացուած  
են, կը բացուին և տխուր բացուին անձեռ-  
րեք, տեղական ոյժերու շնորհիւ ։ Եթէ Դա-

տը-Պիլզը վարժարանը բարեկարգ վիճակ ունի, տեղական ոյժերուն կը պարտի զայն և ոչ կեղրոնին. Եթէ Տօլայ-Տէրէի վարժարանը բարեկարգ վիճակ չ'ունի, տեղական հանգամանքներն են պատճառ: Եւ ի՞նչ կը նշանակէ կեղրոնէն սպասել ամեն բան. ազգը մտնուկի տեղ դնել է, զի մտնուկն է որ կենթարկուի խնամակալութեան, աշխարհի ամենէն յառաջագէժ ժողովուրդներն անոնք են որք ինքնօգնութեամբ կը գործեն և իրենց աջքը կեղրոնին վրայ չ'են յառած: Եթէ ազգին բարիք մ'ընել կուզէք, ջանանք ինքնաշխատութեան ոգին ծառայել անոր մէջ:

Այլքանը միայն բաւ կը համարիմ խօսել, վիճարանութիւնը բանալու համար: Երբ ընդդիմախօս մ'ունենամ, չը պիտի վարանիմ նորէն խօսք առնուլ այս խնդրոց նկատմամբ, որք ներկայ հաստարջմանի կարեւորագոյն խնդիրներէն ի՞նչ կը թուի ինձ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրինական դիտողութիւն մը պիտի ներկայացնեմ որ Ատենայտեւ Էֆէնտին պէտք էր յիշեցնել, բայց չ'ընեւրուան պատճառաւ ես պարտք կը համարիմ առաջարկել:

Համարակալութեան Գիւանի երկու տեղեկագրերն կան այսօր մեր սեղանին վրայ, որոց առաջինն պարտաստուած է նախորդ Տնտեսական Խորհրդոյ Ելմտացոյցին վրայ իսկ երկրորդն արդի Տնտեսական Խորհրդոյ մատուցած Ելմտացոյցին վրայ:

Սակայն նկատելով որ այդ առաջին Տեղեկագիրն իբ մէջ տանն երկու առաջարկութիւններ կը պարունակէ որ կրնայ ընդարձակ վիճարանութեանց դուռ բանալ ինչպէս Չերագ էֆէնտի տնտեսաբանութեան տեսչութեան, որով օրուան խնդիրն առաւել կըընայ ճապարհի, եւ նկատելով որ Վարչութիւնը այժման մատուցած Ելմտացոյցին համար ստիպողութիւն առաջարկած է, կ'առաջարկեմ պահել Ա. Տեղեկագիրն մեր օրակարգին

մէջ եւ անոր առաջարկներն զատ զատ ևս թարկել վիճարանութեան. իսկ երկրորդ տեղեկագիրն այժմ իսկ նկատողութեան առնուլ, որով խնդիրն ալ չ'ճապարհի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անտարակոյս Եթէ ֆախազեան էֆէնտի ժողովոյս Բ. նստին ներկայ ըլլար կամ ատենագրութիւնն աչքէ անցուցած, պիտի տեղեկանար թէ ժողովոյս որոշումն էր մասնաւոր նստի մը մէջ առանց ուրիշ խնդրով զբաղելու, սոյն երկու տեղեկագիրք միանգամայն քննութեան ենթարկուէին, եւ ահա այս պատճառաւ արդի Տընտեսական Խորհրդոյ Ելմտացոյցին հետ նախորդին եւս անցաւ մեր օրակարգին մէջ, իսկ այժմ քանի որ վերջապետութիւնն ցոյց կուտայ թէ նոյն երկու տեղեկագրերն եւս նոյն ժամուն նկատողութեան առնելով, խնդիրն կը ճապարհի, ժողովդ կրնայ համաձայնիլ առ այս Եթէ ուզէ, ֆախազեան էֆէնտի առաջարկութեան:

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, կը համաձայնիմք:

Հետեւաբար Ատենայտեւ Էֆէնտի ժողովոյ կամացն կը դիմէ որ 3 քուէի դէմ միաձայնութեամբ ընդունելով ֆախազեան Ս. Էֆէնտիի առաջարկն, ըստ այնմ կ'ՈՐՈՇԷ՛ Օրակարգին մէջ պահել Համարակալութեան Գիւանի Ա. տեղեկագիրն եւ երկրորդն այժմէն ենթարկել վիճարանութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ Համարակալութեան Գիւանի երկրորդ տեղեկագիրն ժողովոյք վիճարանութեան ենթարկելով, Գիւանս պարտաստ է այս մասին թեր ու դէմ խօսք տալ երեսօթխանաց:

ՍՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Բեմն ելնելով) ատ զո՞ն եմ որ Ազգային ժողովս առաջին ան-

գամ ըլլալով կզրաղի Նլմասացոյի խնդրոյն, քսան եւ Հինգ տարիներէ հետէ Սահմանադրական ազգ մ'ենք եւ կարծեմ մէկ անգամ, 1875 ին, միայն եղած է որ նկատողութեան առինք զայն : Եթէ մինչեւ ց'արդ դրամական խնդրոյն այսպէս կարեւորութիւն տուած լինէինք, Պատրիարքարանի վիճակն չատ աւելի կրնար բարւոյրի : Պէտք չէ մտնալ նաեւ թէ այսօր պիտոճեմ կը քուէարկենք այնպիսի տարուոյ մը Համար որոյ երեք ու կէս ամիսն անցած է, ասի սխալ դրութիւն մ'է, ամեն սահմանադրական աղչոյց մէջ սովորութիւն է որ պիտոճեմ Թարտին կը ներկայանայ, այսինքն նոր տարէշընանկն մի բանի ամիսներ առաջ, ո՛չ մէկ երկրի մէջ օրէնք չէ որ Դիւանները պիտոճեմին քննութեամբ զբաղին : Հարկ է խորհրդարանական Յանձնախումբ մը կազմուի որ քննէ, Համաձայնութիւն գոյացնէ և որոշ ձեռք մը սակ ներկայացնէ պիտոճեմ : Ես այս սխալազոյէն օգուտ քնդելով, կ'առաջարկեմ որ Վարչութիւնը այս մասին մի օրէնք խմբագրելով ըրէր ծաղրվոյս վաւերացման :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ. — (Ընդմիջելով) Արդէն այդպիսի օրէնք մ'ունինք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. Սըփածեան էֆէնտի ըսել կուզէ թէ արդէն կեցած օրէնքը ճշդ գործադրուի այսուհետեւ :

ՍԵՎԱՅԵԱՆ Կ. ԷՅ. — (Շարունակելով) Գալով բուն իսկ տեղեկագրոյն, դժբաղդարար կը տեսնեմ որ խնդիրը աւելի ճատաղելու կը մտնէ քան թէ ըսծուելու : Եթէ Հասարակաւութեան Դիւանն կուզէր խղճի մտօք աշխատութեան մը պատրաստել, պէտք էր Տնտեսական Խորհուրդին զիմեր և հարցըներ թէ ի՞նչու այս ինչ գումարն աւելի նշանակուած է, այն ինչ նուազ, ևն : Այսպէս չը վորուելն պարտագանցութիւն մ'է և ես կը

զիտեմ որ մեր մէջ կան ոմանք որ շատ անգամ մտնաւոր զխումբերով խնդրոց լուծումն փոխանակ զիրացնելու զոյնս աւելի ճատաղելու կը մտնեն . . . :

ԱՅՆԱՊԵՏ ԷՅ. — Կը հրաւիրեմ Ասենաբան էֆէնտին զգուշանալ որ և իցէ յուղիչ ակնարկութիւններէ :

ՍԵՎԱՅԵԱՆ Կ. ԷՅ. — Ներկեցէ որ շարունակեմ, Ասենապետ էֆէնտի, միթէ երեսփոխան մը իրաւունք չունի՞ ըսելու թէ Աղգային ժողովը դրամական կարեւոր խնդրը մի կէր թողլով, անձնական խնդիրներով զբաղած է :

ՄԻ ՔԱՆԻ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ. — Շարունակեցէ :

ՍԵՎԱՅԵԱՆ Կ. ԷՅ. — (Շարունակելով) Ցուելով կրեմէ թէ երկուք ու կէս միլիոն ժողովուրդ մ'ենք, և 300,000 րը ի պիտոճեմ մը պիտի բուէարկենք, և այն ևս այսքան խճրճանայ կ'ենթարկենք : Այսքան վորր ելմտացոյց մ'ունենանք իսկ ցաւալի պարագայ մ'է մեզ համար և տնօր կարեւորութեան վրայ չ'պիտի ծանրանայի, եթէ օրինաւորութեան և ապագային խնդիրը չ'ըլլար : մանաւանդ ապագային մէջ այս ամենն բարեկարգ վիճակի մը հասցնելու նպատակաւ է որ այնքան կարեւորութիւն տալ կ'ուզեմ :

Ես եւս Չերտզ էֆէնտիի հետ բանաւոր չեմ դռներ որ Պատրիարքարանի պաշտօնէից ամսականաց վրայ 1/2 20 դեղը մը լինի. ումեն անգամ որ ստիթ ունեցած եմ Պատրիարքարան երթալու, ցաւ զգացած եմ տեսնելով որ պաշտօնեացք ի՞նչ տեսակ զբաւեղաններու ստիւ և կը նստին, և ինչ գրասենտկներու մէջ : Այդ պաշտօնէից մէջ կան այնպիսիք որք 20—25 տարի ազգին ծառայած են և տակաւին 1000—1500 զրուչի ամսական

